նամք կը տանէին նորան։ Թէ և մեր գիւղացիք պահում էին մեղուներ, բայց նրանք չը գիտելով նոցա պահպանելու պայմանները, չէին կարողանում ստանալ այնքան օգուտ, որքան աշխատութիւն գործ էին դնում նոցա վերա. չը նայելով որ, մեղրը մեր երկրում բաւականին գին է բերում. (Անցեալ տարի Թիֆլիսում նա ծախուեցաւ փութը մինչև 12 մանէթով.) Այժմեան նահապետական ձևերովն անգամ, մի գիւղացի, օրինակի համար, որ ունէր 30 փեթակ, ամէն տարի միջին թւով ծախում է մինչև 210 կամ 240 մանէթի մեղր. որոյ ընդհակառակն, եթէ օրինաւոր կերպով պահպանուէին, որպէս ցոյց է տալիս այժմեան գիւղատնտեսական արհեստը, կարելի էր յիշեալ գումարի կրկնապատիկը ստանալ։

Այս անգամ բաւականանալով այդ փոքրիկ նկատողութիւնով, խոստանում եմ յետոյ մեր գիւղացւոց ուշադրութիւնը դարձնել այն առարկայի վերայ, թէ որպէս է նայում այժմեան գիւղատնտեսական արհեստը մեղուաբուծութեան վերա, և հետևաբար կաշխատեմ ծանօթացնել մեղրաճանճերի կեանքի, նրանց բնութեան և նրանց պահպանութեան կանոնների հետ։

Վախթանգ Քուչուբեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 21-ին աւարտեցան Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի մէջ հարցաքննութիւնները։ Առաջին հարցաքննութիւնը կրօնքից էր։ Մեր կարծիքով քրիստոնէական բոլոր ուսումը ամեն մարդի համար բաղկանում է՝ աւետարանից, հին կտակարանից, իսկ երիտասարդներին, որք պատրաստւում են քահանայ լինել, հարկաւոր է և եկեղեցական արարողութիւնները ու ծէսերը իմանալ և նրանց նշանակութիւնը հասկանալ։ Բարձր դասատներում պէտք է երեխան ծանօթանայ թէ ընդհանուր թէ մեր եկեղեցական պատմութեան հետ։ Բայց մեզ անհասկանալի է թէ ինչ օգուտ կարող են բերել խրթին, միջնադարեան, սխոլաստիկական մտքերը նոր սերունդի համար (բացի նրան մոլորեցնելուց)։ Օրինակ՝ քանի բաներ կան որք խղճմտանքը չէ ներում,—ինն...։ Մեր կարծիքով պատուարժան կրօնուսոյցը մոռացաւ տասներորդը որ խղճմտանքը նոյնպէս չէ ներում, այն է՝ մարդու աւետարանի տեղ սովորեցնել երիտասարդներին տաղտկալաբանութիւն, և Քրիստոսի խօսքի տեղը իր սեփական գլխից բաներ հնարել։ Մենք խոստովանում ենք, մենք աւետարանը կարդացած ենք, բայց երբէք պատահած չենք այնպիսի մտքերը որք մեզ տեղեկացնեին Աստուծոյ ամենագիտողի գիտաւորութիւնների մասին։ Կրօնուսոյցը, չենք իմանում ինչ հրաշքով, տեղեկացել է Ամենակարողի գիտաւորութիւնների մասին։ Նա օրինակի համար հարցնում է աշակերտից՝ ինչ գիտաւորութեամբ Աստուածը վաղ չուղարկեց Քրիստոսին մեր մեղքերը սրբելու համար, այլ այսքան ժամանակ թողեց մարդկութիւնը մեղքերի մէջ։—Եթէ աշակերտը ճշմարիտ քրիստոնեայ լինէր ու սարկացած չը լինէր, նա կը պատասխանէր, «այդ բանը ոչ ես գիտեմ, ոչ դուք տէր-հայր»,—բայց նա ստիպուած է պատասխանել այն, ինչ որ անգիր է ասել տուել նրան Աստուծու գիտաւորութիւնների հետ մօտիկ ծանօթ կրօնուսոյցը։ Կամ այդպիսի անհամութիւն՝ ինչից ենք իմանում թէ աստուածը չար չէ այլ բարի է.—նրանից ենք իմանում, որ նա չար չէ, որ նա էակ է, իսկ էակը բարի է և ոչ թէ չար, ուրեմն Աստուած բարի է...։ Վերջապէս ո՞ր մէկն ասեմ....

⁂

Մենք լսեցինք, որ ուրբաթ օրը քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովի նստում առաջին անգամ է պատահում որ քաղաքագլուխը մի պատգամաւորի առաջարկութեամբ ռուսերէն լեզուով կարդացած զեկուցումն բերանացի թարգմանել է տուել վրացերէն լեզուով...։ Այդ առաջին քայլ է...

⁂

Երեքշաբթի օրը մայիսի 22-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովը դարձեալ չը կայացաւ։ Հարիւր պատգամաւորներից հազիւ հաւաքւում էին օրէնքով թոյլ տուած ամենափոքր թիւը՝ 34 մարդ, որ նիստը կայանայ։ Երեքշաբթի հաւաքուեցան միայն 30 մարդ...։ Մեր հին սերունդը ունելով հասարակական իրաւունքները, անհոգ է ցոյց տալիս իրան դէպի հասարակական գործերը և չէ գործ դնում ունեցած իրաւունքները, բայց միևնոյն ժամանակ և չէ թոյլ տալիս նոր սերունդի ներկայացուցիչներին իրանց տեղը բռնելով, գործ դնել իրանց թարմ ույժը, եռանդը և ստացած հմտութիւնները հասարակաց օգտին։

⁂

Моск. Вѣд. Լրագիրը հաղորդում է որ պարսից Շահը Մօսկվա եղած ժամանակ այցելութիւն արաւ և Լազարեանց ճեմարանին, որտեղ ընդունեց նրան հիմնարկութեան բոլոր վարչութիւնը և պրօֆէսօր Ստէփան Նազարեանցը պարսկերէն լեզուով մի ճառ ասեց։ Նորին մեծութիւնը ընծայեց պ. Նազարեանցին մի թանգագին ընծայ։

⁂

Մենք հաղորդած էինք մի ժամանակ որ գիտաւորութիւն կայ հիմնել Թիֆլիսում սպառման ընկերութիւն։ Այժմ լսում ենք, որ յիշեալ ընկերութեան վերաբերութեամբ ներկայացրած կանոնադրութիւնը հաստատուած է կառավարութենից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Հեռագիրը մեզ ծանուցած է որ Ֆրանսիայում թէ նախագահութեան թէ մինիստրութեան մէջ մեծ փոփոխութիւններ են պատահել։ Թիէրի տեղը ընտրվեցաւ մարշալ Մակ-Մահօնը և մինիստրութեան մէջ մտան մարդիկ, որք պատկանում են միապետական կուսակցութեանը և այն էլ օրլէանեան են երևում։ Իսկ նոր մինիստրներից մէկը՝ արդարութեան մինիստր պ. Էռնու մինչև անգամ եզուիտ է։ Բայց լրագիրներում այդ անակնկալ փոփոխութեան մասին դեռ ևս չը կան մանրամասնք։

Խմբագրութիւնս ստացաւ քանի մի նամակներ Փարիզից, որք թէև գրած են վերջին քաղաքական փոփոխութենից առաջ, բայց այնուամենայնիւ յաջորդ համարներից մենք սկսելու ենք յիշեալ նամակների տպագրելը։

ԱՄԵՐԻԿԱ

Խաղաղական Ովկիանոսի եզերքում բնակւում են ամերիկացիների բնիկների Մօդօկ անունով ցեղերը, որք իրանց արշաւանքներով սպիտակ բնակիչների վրա ու իրանց աւազակութիւններով սոսկալի անհանգիստ են անում նրանց։

Նրանց մէջ տարածված է այն աւանդութիւնը թէ պիտի գայ մի մարդ որ կազատէ նրանց սպիտակների ձեռքից։ Այդ վայրենի ցեղի միամտութենից օգուտ է քաղում անգլիացի կապիտան Ջէկ (Jack), որ իրան յայտնում է մեսսիա այդ վայրենիներին և առաջնորդում է նրանց արշաւանքը Կալիֆօրնիայում զետեղված սպիտակների ազգաբնակութեան վրա։ Ամերիկական ամբողջ լրագրութիւնը պահանջում է որ այդ և կարմիր բընիկների ուրիշ ցեղերը տէրութիւնը անողորմ կերպով ոչնչացնէ։ Զարմանալի չէ, որ մինչև այժմ Ամերիկան չը կարողացաւ այդ վայրենիների համակրութիւնը գրաւել... ընդհակառակն յայտնի է, որ աւելի ուշադրութիւն չը դարձնելով նրանց բարոյական, մտաւոր և տնտեսական զարգացման վրա, ամերիկացի կրթված գաղթականը հալածահալածում էր խեղճ բնիկներին, ծախում էր նրանց վրա արաղ, փտած և թունաւորելով նրանց բարոյականութիւնը, նպաստում էր և նրանց տնտեսական կատարեալ անկմանը։

ԿՐՕՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԸ

Ազգային Կրօնական Ժողովն անցեալ շաբթու ազդարարութիւն մը ղրկեց ազգային գաւառական թերթերուն, որպէս զի եկեղեցական արարողութիւններն ու եկեղեցականները ծաղր նիւթ չընեն։

Կրօնական ժողովոյ այս ազդարարութիւնն անշուշտ մեծ գոհութիւն կը պատճառէ այն ամեն ազգայնոց, որք կրօնական կրից և եկեղեցական արարողութեանց գերագոյն սրբութիւնը կը ճանչեն, և անոնց հարկ եղած յարգանքն ու ակնածութիւնն անաղարտ պահելու արդար նախանձաւորութիւնն ունին։

Արդարև մեր հաւատոյն և կրօնին վերաբերեալ իրերն աշխարհի առջև ծաղու և զուարճութեան նիւթ ընելն անտարբերականութեան վերջին ծայրն է։ Այն անձինքը՝ որ ազգին ամենէն բարձր և սուրբ զգացումը վիրաւորել կը ժպրհին, ոչ թէ հայ՝ այլ և մարդ իսկ կոչուելու անարժան են։

Մեք չենք յուսար որ ազգային խմբագրաց մէջ այն աստիճան ամբարիշտ անձինք գտնուին, որ իրենց կրօնքը ծաղրելու և ծաղրել ընելու գիտում ունենան. բայց եկեղեցականաց նկատմամբ այնպէս չէ։ Եթէ Կրօնական Ժողովը կրօնի սրբազան հաւատալեաց ու արարողութեանց հետ եկեղեցւոյ պաշտօնեայներն ալ հաւասար բռնելով, մի և նոյն ակնածութիւնը կը պահանջէ նաև անոնց համար, չարաչար կը սխալի, վասն զի երկուքին մէջ տարբերութիւնն անհուն է։ Կրօնական արարողութիւններն իրենքն սուրբ են միշտ, բայց եկեղեցականք իրենք և միշտ սուրբ չեն։ Կը գտնուին արդարև սրբակրօն եկեղեցականներ, եկեղեցւոյ արժանի պաշտօնեայներ, բայց կը գտնուին նաև անսուրբներ, իրենց կոչման արժանի չեղողներ, որք գայթակղութիւն են ժողովրդեան և ոչ շինութիւն. այս վերջիններուն համար ալ նոյն ակնածութիւնը՝ նոյն յարգանքը կրնա՞յ պահանջուիլ ինչ որ կրօնի և կրօնական իրաց համար իրաւամբ կը պահանջուի և պէտք է պահանջուի։

Եկեղեցական մ'երբ որ անարժան ընթացքի մէջ գտնուի, երբ որ ինքզինք ծաղրելի վիճակի մէջ դնէ հրապարակաւ, շարիվարի թերթերը թէև չծաղրեն, հասարակաց կարծիքը կը ծաղրէ, և այս պարագայիս մէջ յանցանքը ոչ թէ ծաղրողին կամ խնդացողին է, այլ ինքզինք ծաղրելի ընողին։

Կրօնական ժողովոյ առաջին և անհրաժեշտ պարտքն է կարծենք խոր ուշադրութիւն ընծայել այս կէտիս և հսկել եկեղեցականաց վրայ, մանաւանդ խստիւ արգիլել, որ եպիսկոպոսներէ և վարդապետներէ ոմանք եկեղեցւոյ մէջ քարոզ խօսած ժամանակնին զաւեշտներ կամ զուարճաբանութիւններ ընելով ժողովուրդը չծիծաղեցնեն *)

Եթէ շարիվարի թերթերու մէջ կրօնական իրերը ծաղու նիւթ ընողները դատապարտելի են, քանի առաւել դատապարտելի են այն եկեղեցականք, որ նոյն իսկ եկեղեցւոյ մէջ այդ ապօրինութիւնը գործեն։

Կը յուսանք որ Կրօնական Ժողովը մեր այս լուրջ դիտողութիւնը նկատողութեան առնելով՝ բարեկարգութիւնն աւելի խորէն կսկսի, և նոյն իսկ իւր ծոցը գտնուող Գերապատիւ հայրերէն ոմանց կը պատուիրէ որ եկեղեցւոյ մէջ լուրջ կերպիւ վարուին և պարտ ու պատշաճ ակնածութեան օրինակ ըլլան այլոց։

(Մասիս)։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ի. ՆԱՄԱԿ

Պ. Րաֆֆիի ուղևորութիւնից

Մօլլայի ուղեկցութիւնը վերջապէս եղաւ անտանելի, ես թողելով նորան ընկերացայ մի փոքրիկ քարվանի հետ, որոյ մեծ մասը կազմում էին Հրէաներ։ Իսրայէլի հալածական որդիքը աւելի բարեկամութեամբ վարւում էին ինձ հետ, քան թէ մահմետականութեան մոլեռանդ ներկայացուցիչը։ Ինչ էր դորա պատճառը։ Տիրապետողի,—ճնշող ազգի, հալածանքը եղբայրացնում է ստորադրեալ ազգերը, որքան և նոքա թշնամական յարաբերութեանց մէջ լինէին։ Պարսկաստանում հրէաների և քրիստոնեաների վիճակը շատ նման է և նոքա զգում են միմեանց։

Հասնելով Սօվուխ—Բուլախ քաղաքը արդէն յայտնուեցաւ իմ մէջ տաքցոց. այդ տկարութիւնը վերջին փոթորիկի միջոցին սաստիկ մրսելու հետևանքն էր։ Եւ եթէ ես, փոխանակ տանջուելու սառն և կեղտոտ քարվանսարայների իջևաններում, գտայ այդ քաղաքում մի յարմար օթևան տաք քուրսու մօտ, փափուկ օթոցի վերայ, դորանով ես պարտական եմ իմ ուղեկից հրէայ խախամին (քահանայ) որ, կարեկցելով իմ տկարութեանը, առաջարկեց ինձ իւր տունը։ Հրէայ քահանայի առատասրտութիւնը յիշեցնում էր ինձ Աբրահամի հիւրասիրութիւնը։ Նա ունէր երկու կանայք, որք ամենայն մեծարութեամբ նստում էին ինձ մօտ, կիսով չափ ծածկուելով քուրսու վերմակի տակ։ Այդ Սիօնի դստրիկների հագուստը և զարդարանքը յիշեցնում էր ինձ Եզեկիէլի տողերը «Եւ քեզ զարդարելով զարդարեցի, և ձեռքերուդ վերայ ապարանջաններ դրի, ու գլխանոցիդ վերայ մանեակ դրի։ Եւ քո քիթդ՝ օղակ, ականջներդ՝ գինդեր, ու գլուխդ պարծանաց պսակ դրի, և դուն ոսկիով ու արծաթով զարդարուեցար»։

Այդ տեսակ զարդարանքները երևում են այս կողմերում, ոչ միայն իսրայէլուհիների մէջ, այլ և քուրդ, հայ և ասորի կանանց մէջ։ Քթից օղակ անցկացնելը ես առաջին անգամ տեսայ ատրպատականի հայոց գեղեցիկ սեռի մէջ, երևում է այդ սովորութիւնը նոքա հրէայներից պէտք է ժառանգած լինեն։ Իսկ սրունքների վերա յուլունք կապելը, կամ ապարանջան կցելը հանդիպում են վայրենի ցեղերի մէջ միայն։ Այդ սովորութիւնը Պարսկաստանի ստորին դասի հայ կանանց մէջ պէտք է ժամանակի խորին հնութիւնից մնացած լինի։

Իմ հիւրընկալը, որպէս յիշեցի քահանայ էր։ Նա ունէր իւր տանում քինիշթայ (սինագօգայ)։ Ամէն շաբաթ օր այստեղ հաւաքւում էին հրէայ ժողովուրդը աղօթելու, կարդացւում էր հին կտակարանը, որ գրուած էր մագաղաթի վերա։ Նա ունէր կէս արշին լայնութեամբ երկար կերպասի ձև, որոյ ընթերցանութիւնը վերջանալէն յետոյ, կլորում էին, փաթաթում էին և խնամքով դնում էին մի արկղի մէջ։ Այդ ամենահին ձևը պէտք է լինի Աստուածաշնչի գրչագրի պահպանութեան։

Լօնդրայում և Եւրոպիոյ զանազան քաղաքներում տպագրուած հատորները հին կտակարանի, ոչ միայն ընդունելութիւն չեն գտած այս կողմերի սինագօգայներում, այլ նոցա ընթերցանութիւնը անգամ մեղք է համարվում։ Առանձին դպիրների արհեստն է այս կողմերում պատրաստել մագաղաթ և գրել սուրբ գիրքը, որ թանգ գնով ծախում են նոցա իւրեանց ազգակիցներին։ Հրէայք պարապւում են այստեղ մանրավաճառութեամբ, և պահպանել են իւրեանց լեզուն, թէև նա բաւականին աղաւաղուած է հեռանալով հին եբրայական բարբառից։ Նոցա տղամարդիկը մեծ մասամբ գիտեն գրել կարդալ։ Նոքա զէնք չեն կրում։ միակ զէնքը, որին սպասում են՝ է ոսկի թուրը, որոյ գտնելու հետ անմիջապէս կապակից է Մեսսիայի յայտնուելը։ Այդ աւանդութիւնը տիրում է այս կողմերի բոլոր հրէայների մէջ։ Այդ մեծահաւատութիւնից օգուտ քաղելով պարսիկները կամ թուրքերը, պատմում են, շատ անգամ գաղտնի քցել են մի հրէայի տնում որ և իցէ թուր և իսկոյն յայտնվել է նոցա մէջ յուզմունք և խռովութիւն։ Այդ կատակը առիթ տուեց ինձ մի օր հարցնել իմ հիւրընկալից։

—Ինչու դուք էլ քրդերի նման զէնք չէք կրում, որ պաշտպանէք ձեր անձը նոցա յաղթահարութիւններից։

—Երբ կը յայտնուի Մեսսիան՝ ասաց նա,—այժմեան ազգերի ամենազօրեղ թագաւորները կը բռնեն մի իսրայէլացի զաւակի փէշքէն և ողորմութիւն կը խնդրեն։

Այս կողմերումս էլ, որպէս մի ժամանակ Եւրոպայում, դեռ ևս տեսնում են այն սարսափելի հալածանքները հրէաների դէմ, և կողոպտում են նոցա տները, պատճառ բռնելով, թէ նոքա գողանում էին երեխայներ։ Այդպիսի հանգամանքներում հրէան ոչ միայն իւր կայքի, այլ և իւր գլխի տէրը չէ։

Սօվուխ—Բուլախը բնակեցրած է մեծ մասամբ քրդերի զանազան ցեղերով, որք ունեն հաստատ բնակութիւն։ Նոքա կառավարվում են իւրեանց բէկերով, որոց ամէն մի տունը ժամանակի խորին հնութիւնից ժառանգաբար տիրում է առանձին ցեղի վերայ և համարվում է նոցա նահապետը։ Այժմ դոքա թէև բոլորովին հպատակած են Պարսից տէրութեանը, բայց դեռ ևս պահպանում են միջնադարեան ասպետների ազնուապետական

---

*) Վերջին հրեշտակապետաց տօնին օրը Գալաթու եկեղեցին գտնուելով, կրօնական ժողովոյ անդամ Գեր. եպիսկոպոսի մը քարոզը լսեցինք՝ որոյ մէջ յիշեալ սրբազանն երկնային զինուորութեան դասակարգութիւնները թուելով, «Աթոռոց, Պետութեանց, Իշխանութեանց, Զօրութեանց, Սերոբէից, Քերոբէից» և այլն ըսած ժամանակ, միջանկեալ յաւելուած մ'ըրաւ ըսելով, «բայց օրհնեալ ժողովուրդ, Սերովբէ, Քերովբէ կըսեմ նէ՝ Գէորգէ Սերովբէն ու Մէլխոնէնի Քերովբէն չը հասկընաք հա». և բոլոր ժողովուրդը ծիծաղեցաւ։

յատկութիւնքը։ Նոքա տիրում են իւրեանց ժողովրդի թէ կեանքի և թէ կայքի վերայ։ Այստեղի քրդերը պատկանում են գեղեցիկ ցեղի, ունեն քաղցրահնչիւն բարբառ։ Նախնական զէնքերը—նիզակ, վահան, թուր, դաշոյն, սաղաւարտ և զրահ,—դեռ պահպանուել են նոցա մէջ ամենայն սրբութեամբ։ Ազատութիւնը, արեան վրէժխնդրութիւնը մի առանձին զուարճութիւն է համարվում նոցա համար։ Քուրդերը չունեն գրականութիւն, գրում են արաբացոց տառերով և պարսից լեզուով։ Ժողովրդի մէջ դեռ չէ մտած գրագիտութիւնը. նա սեպհական է տակաւին շէյխերին և բէկերին։ Քուրդերի կանայքը (առաւելապէս ստորին դասի մէջ) դեռ չեն ընդունել պարսից ծածկապահութեան սովորութիւնը, նոքա երեւում են տղամարդերին բաց երեսներով։

Սօվուխ—Բուլախը ունի մինչև 1000 տուն բնակիչ։ Չը նայելով նորա փոքրութեանը, նա համարվում է Քրդստանի վաճառականութեան կենդրոնը։ Հայ բնակիչների թիւը այստեղ շատ փոքր է։ Վաճառականութեան գլխաւոր ուժը գտանվում է այլ քաղաքներից այստեղ եկած հայերի ձեռքում։ Բայց ցաւալի է խոստովանել, որ նոցա մեծ մասը,—փոխանակ միջնորդ լինելու Մուսուլի և Բաղդադի առևտրական յարաբերութիւններին Սօվուխ-Բուլախի հետ, փոխանակ անկիրթ քրդերին վաճառականութեան հաւատարիմ օրինակ դառնալու,—պարապվում են վաշխառութեամբ, անխիղճ անգթութիւններով հարստահարելով քուրդ բէկերին և ծանր ծանր տոկոսների փոխարէն տիրելով այդ միամիտների կալուածքները և նոցա արդիւնաբերութիւնքը։

Երեք օր միայն մնացի այս քաղաքում, և բոլորելով Ուրմիոյ լճակի հարաւ-արևելեան եզերքը, ես անցայ Բինար, Միանդաբ, Մարաղայ, Գոխարղան և Գունէյատան կոչուած մահալները։ Դոքա զանազան գաւառիկներ են, որք ունեն իւրեանց փոքրիկ գիւղաքաղաքները։ Ինձ պատմում էին, թէ այդ երկրները տարուոյ մնացորդ եղանակներում կատարեալ դրախտ են։ Խաղողենին պտղաբերվում է այստեղ ամենայն չքնաղութեամբ։ Մարաղայի քշմիշը և սաբզան կարելի է որթի բերքի ամենաազնիւ տեսակներից մինը համարել։ Նա վաճառահանվում է մեծ մասամբ դէպի Ռուսաստան։ Չը նայելով բնութեան հարստութիւններին, ժողովուրդը թշուառ աղքատութեան մէջ է ապրում։ Յիշեալ երկրները բնակեցրած են մեծ մասամբ թուրքերով։ Մարաղայում Սօվուխ-Բուլախում առաջին անգամ ես հանդիպեցայ հայ ազգաբնակութեան, որք իւրեանց մայրենի լեզուն չը գիտէին և խօսում էին տաճկերէն։ Նոցա քահանայքը ոչինչ կերպով չէին որոշվում հասարակ գեղջկից։

Վերոյիշեալ երկրները իւրեանց ջրերի պակասութեան պատճառաւ, շատ տեղեր կարող էին բոլորովին անապատ դառնալ, բայց կեանքի և ապրուստի հոգսերով ծանրաբեռնուած ժողովրդի աշխատասէր ձեռքերը, կարողացել է այն չոր ու ցամաք աւազոտ դաշտերի միջից, գետնի տակով ծակելով, արուեստական խողովակների միջոցով, ջուր դուրս բերել, որ կոչվում են քարհէզ։ Իհարկէ, քարհէզների շինութիւնը աղքատ գիւղացու գործ չէ, նոքա սեպհականութիւն են դրամատէրների, որք ջուրը բաժնելով ծախում են գիւղացիներին, որք ողորմելի աղքատութեան մէջ են։ Թէ և տեղ տեղ հանդիպում են և հարուստներ, բայց դոքա նմանում են այն հսկայ և հրէշաւոր ծառերին, որք խորին արմատ ձգելով գետնի մէջ, և երկրի բոլոր ուժը և մնունդը ծծելով, չափազանց հաստացել են, և ընդարձակ, ստուերախիտ ճիւղեր արձակելով, մի և նոյն ժամանակ ճնշում են, խեղդում են փոքրիկ ծառերը իւրեանց հովանու տակ։

Ամբողջ երկու շաբաթ տևեց իմ ճանապարհորդութիւնը Բինարի, Միանդաբի, Մարաղայի, Գօխարղանի և Գունէյատանի միջով։ Անցնելով Մայանի անապատը և Աջի գետը,—Այ Թաւրիզն է. ասաց մեր առաջնորդը, ձեռքը մեկնելով դէպի արևելք։

Զորէյդայ—Խաթունի քաղաքը 1) դեռ մնում էր վաղորդեան մառախուղի տակ, որ թափանցիկ եթերական փոշիի նման նստած էր նորա վերայ։ Արշալոյսը դեռ նոր սկսել էր շառագունել։ Հսկայական Արքը 1) նկարվում էր հեռուից երկնքի մանիշակագոյն կապտաւութեան մէջ։

Մեր գրաստները ընթանում էին դողդոջուն և դանդաղ քայլերով, նոցա մաշուած պայտերը (նալ) սլլվում էին սառած գետնի վերայ։

Խորասուզուած տխուր մտածութեանց մէջ անցեալի յիշատակներով և ներկայի թշուառութիւններով, ես իմ ամբոխմունքը ցրուելու համար, սկսեցի մի այդպիսի խօսակցութիւն իմ Սանչօ Պանսայի հետ։

—Մեսրոպ, տեսնում ես այդ սարերը, նոցա յետքումն է Մարանդը, ուր դրած է Նոյի կնոջ գերեզմանը, տեսնում ես այդ մեծ քաղաքը, ուր շուտով կը հասնենք մեք, ասում են, դա շինուած է եղել մեր հայ պապերից։

Մեր խօսակցութիւնը ընդհատեցին մի քանի ձեռքը, ոտքը կօսացած բորոտներ, որք դուրս գալով քարհէզի խողովակներից, ողորմութիւն էին խնդրում։ Այդ թշուառների այլանդակուած կերպարանքը զզուանք էր բերում։ Արևելքում այդպիսի հիւանդները միշտ արտաքսուած են ժողովրդական բնակութիւնից, որպէս զի միւսները չը վարակուէին նոցա ախտով 2)։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիայի երկաթուղիների վրա սկսելն գործածել երկու յարկ ունեցող վագոնները։ Ներքեւ գտնվում են ճանապարհորդները 1 և 2 կարգի, խսկ վերև 3-որդ կարգի ճանապարհորդները։

⁂

Ամերիկայում հրատարակվող մի լրագիր ուշադրութիւն է դարձնում այն երեւյթի վրա, որ Ամերիկայում օրէցօր ընդարձակվում է զէնքերի գործածութիւնը կանանց սեռի մէջ։ Խանութներից տուած տեղեկութիւններին նայելով, Բօստօն քաղաքի մէջ կանանց վրա ծախվեցաւ 1872 թուի ընթացքում մինչև 6817 րէվօլվէր։ Առնողները մեծ մասամբ մանկահասակ կանայք էին։

⁂

Վիէննայի աշխարհահանդէսի վրա մի ավստրիացի ժամագործ ներկայացրել է մի նոր ձևի ժամացոյց, որի մեքանիզմը շարժվում է ջրի հոսանքի օգնութեամբ։ Ասում են որ ժամացոյցը անչափ էժան է։

⁂

«Մասիս» լրագրում կարդում ենք՝ Բէշթէն և Վիտինէն մայրաքաղաքիս քառանթինայի տեսչութեան եկած վերջին լուրերն յիշեալ քաղաքաց մէջ քօլէռային գոյութիւնը հաստատելով, վերին Դանուբէն եկած ճանապարհորդնին ու նաւերը քառանթինայի ենթարկուեցան և Վիտինի ու Լօմի հետ հաղորդակցութիւնն արգիլվեցաւ։

⁂

Նոյն լրագրում կարդում ենք՝ Եափայէն Երուսաղէմայ գիր, փոխանորդին եկած նամակը մը կը ծանուցանէ թէ 16 ուխտաւորք, 5 հայ, 10 յոյն և մէկ հրէայ Եափայի նաւամատոյցէն մակոյկ մը նստելով շոգենաւը գնացած ժամանակնին՝ մակոյկը դարձեր և մէջ գտնուողներուն ամենն ալ ծովասոյզ եղեր են։

⁂

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի մէջ կրօնի հարցաքննութեան ժամանակ մի աշակերտից հարցնում են՝ ինչ է հարկաւոր քահանային։ Աշակերտը զանազան յատկութիւններ յիշելուց յետոյ, ինչպէս՝ պարկեշտութիւն, լաւ բարք, խոնարհութիւն և այլն, վերջը աւելացնում է՝ քիչ էլ ուսում։

⁂

Մեզ գրում են Քութայիսից, որ մայիսի 17-ին այդտեղի սիրողները (մեծ մասամբ հայերը) հայոց աւագ քահանայ Տէր-Դաւիթ Եարալեանցի յորդորանքով մի ներկայացումն տուին՝ կէս հայերէն, կէս վրացերէն լեզուով։ Տէր-Գրիգորեանցի «Նա էլ բի մօցիքալութիւն» տրվեցաւ վրացերէն լեզուով, Պաստըխեանցի «Երկուսս էլ քաղցած ենք» հայերէն լեզուով և զաւեշտ։ Ներկայացումը յօգուտ հիմնվող հայ-օրիորդաց ուսումնարանի էր։ Զուտ արդիւնքը մնաց 200 րուբլի։

⁂

Մայիսի 21-ին Ներսիսեան դպրոցի մէջ կրօնի հարցաքննութիւն էր, մայիսի 22-ին եկեղեցական պատմութեան, ուրբաթ և շաբաթ (25 և 26) կը լինի հայոց լեզու, երեքշաբթի (29) ֆիզիքա և ֆիզիքական աշխարհագրութիւն, յունիսի 1-ին, ուրբաթ օրը ռուսաց լեզու, շաբաթ (2) ֆրանսիսերէն լեզու, երեքշաբթի (5) ֆրանսիսերէն և ռուսերէն լեզու, հինգշաբթի (7) թուաբանութիւն, ուրբաթ (8) գծագրութիւն և հաշուապահութիւն, երկուշաբթի (11) երկրաչափութիւն և ալջեբրա, հինգշաբթի (14) հայոց և ռուսաց պատմութիւն, ուրբաթ (15) աշխարհագրութիւն։

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ՓՕՍՏԸ. Ռուսաստան և Արտասահման ամեն օր, բացի կիրակի օրից։ Երկուշաբթի. Քութայիս, Չէրնօմօրի վիճակ, Սուխում, Երևանի գաւառ։ Երեքշաբթի. Բագու, Գանձակ, Դաղստանի նահանգ (թեթև փօստը)։ Չորեքշաբթի Քութայիս և Ալէքսանդրապօլ։ Ուրբաթ Քութայիս, Երևան, Նուխի, Զաքաթալ, Ախալցխայ։ Շաբաթ. Բագու Գանձակ (ծանր փօստը)։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ գնում է ամեն օր՝ խառն գնացքը առաւօտ 9 ժամին 25 րոպէ։ Ճանապարհորդների գնացքը երեկոյեան 9 ժամին 30 րոպէ։ Գալիս է՝ կէս օրից յետոյ 4 ժ. 47 ր. և երեկոյեան 11 ժ. 40 ր.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթևեկ հիւանդների համար գտնվում է Ս. Նշան եկեղեցու մօտ Եազօր Ղաբաջևի տանը և բաց է ամեն օր հիւանդների ընդունելութեան համար առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

ԱԶԴ

Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն ԳԷՈՐԳԱՅ Հրամանագրութեամբ՝ Էջմիածնապատկան գիւղօրայքը տրվում են կապալաւ, ուստի ցանկացողները կարող են մինչև Մայիս ամսոյս վերջը անձամբ ներկայանալ 'ի սուրբ Էջմիածին կամ ուղղակի հեռագիր գրել Նորին Վեհափառութեան, և յայտնել իւրեանց ցանկութիւնը։

Մովսէս աւագ քահանայ Սայեաթնեանց, անդամ Ատենակալ Հայոց Վ. Կոնսիստորի։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մայիսի 23-ին).

ՈՍԿԻՆ (պօլուիմպէրիալ)	6 ռ.	7 կ.
ԲԱՄԲԱԿԸ Երևանու	4 „	20 „
„ երկրորդ տեսակը	4 „	— —
„ Ամերիկաի սերմից	6 „	70 „
ԲՈՒՐԴԸ Թուշի	4 „	90 „
„ „ երկրորդ տեսակը	4 „	60 „
„ Թարեքեամի	3 „	20 „
ՇԱՔԱՐԸ Ռուս (Բրօդկու)	7 „	35 „
„ „ միւս տեսակը	7 „	30 „
„ գազրանեցու տրանցից	5 „	— —
մաքուր վճարած	8 „	25 „
ՇԱՔԱՐԱԽԱԶԸ Ռուս	6 „	40 „
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը	15 „	50 „
„ Մօկօ, շատ լաւը	17 „	50 „
„ Մարտինիկայի, ցածրը	13 „	80 „
ԱԼԻՒՐԸ Երևանի առաջին տեսակը	1 „	45 „
„ „ երկրորդ տեսակը	1 „	40 „
ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ	1 „	65 „
„ Շորագեալու	1 „	60 „
ԳԱՐԻՆ Երևանի	— —	90 „
ՊՂՊԵՂԸ	11 „	20 „
ՇԻՐԵՅԱԽՏԻ ձէթ	8 „	60 „
ՄՈՄ	13 „	— —

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մայիսի 23-ին)

ՓՈԽԱՆԱԿ. բարաթ պօլս. . . վճա.	6—75
„ „ Թաւրիզում վճա.	— —
ՄԱՐՍԷԼ և Փարիզ. 100 րուբլին աժէ.	344 ֆր.
ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդեսայի կուրսը) 7 րուբլի 34 կոպէկը աժէ.	1 Լիրա
ՄԱՐՍԷԼՈՒՄ բամբակի 50 քիլօ 3 փութ 2 գրվ.) ծախվում է	76 ֆր.
(ՄԱՐՍԷԼՈՒՄ Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվում է	95 ֆր.
„ առաջին տեսակը	72 ֆր.
„ երկրորդ տեսակը	63 ֆր.
ՄԱՐՍԷԼՈՒՄ Թուշի սպիտակ բուրդը ծախվում է	88 ֆր.
„ երկրորդ տեսակը	80 ֆր.
„ գառան բուրդը աժէ	126 ֆր.
„ Թարաք. բուրդը աժէ	— —
„ Ղարաբ. բուրդը աժէ	62 ֆր.
„ երկրորդ տեսակը	55 ֆր.

ՌԱՇՏ աբրեշումի 6 բաթմանը (2 փութ 7 գրվանքայ) 171 ղռան (10 ղռանը 3 ռուբ. 22 կ.)

ՄԱԶԱՆԴԱՐԱՆ, աբրեշումի 6 բաթմանը աժէ 82 ղռան։

ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ խարջ Նուխվայ թել (մետաքը) շատ ընտիրը 145 րուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։

(Մայիսի 11-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի աժէ $32\frac{9}{16}$ պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի աժէ $345\frac{1}{2}$ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ		—
երկրորդ		—
5% Բանկի տոմսակ „	1 շրջանի	$95\frac{3}{4}$
„ „ „	2 շրջանի	$95\frac{1}{2}$
„ „ „	3 շրջանի	$95\frac{3}{4}$

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ապահովութեան, ապրանք պահելու վարրատների հաստուցմամբ
Հիմնական դրամագլուխ 3,000000 րուբլի արծ.

Ապահովութիւն կրակի դէմ ամեն տեսակ շարժական և անշարժ կայքի՝ տների, խանութների, ապրանքի, ֆաբրիկաների, զաւօդների, մեբէլի, տնային կայքի, երկաթուղու շինութիւնների և այլն կայքերի, բոլոր Անդրկովկասեան երկրում, աւելի պակաս գնով քան թէ այլ ապահովութեան ընկերութիւնները.

Գրասենեակը գտնվում է Թիֆլիսում, Սօլօլակի փողոցում Քաղաքային վարչութեան դէմ ու դէմ, Ամիրաղովի տանը.

Գործակատար ԳՐԻԳՈՐԻԵՎ.

Ցանկանում են փոխ առնել 5 հազար ռուբլից մինչև 10 հազար ռուբլի, վճարելով մինչև 12 պրոցէնտ շահ, քաղաքի անշարժ կայքի հաստատ գրաւականով։ Հարցնել «Մըշակի» խմբագրութեան մէջ։

Մամուլի տակ մտաւ «Մեծ մարդիկի պատմութիւններ» անունով թարգմանական աշխատութիւնը։ Խնդրում եմ դարձեալ Հայ-պարոններից չխնայել իւրեանց դրամական օգնութիւնը։

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան։

---

1) Թէ և հայերը Դավրէժի հիմնարկութիւնը մեր Խոսրովին են ընծայում, բայց պարսիկները համարում են նորան շինուած արաբիայի թագուհի Զորէյդայ—Խաթունից, որը այստեղից անցնելու ժամանակ ազատուեցաւ իւր տաքէն և կոչեց նորան Թաբ-րիզ, որ պարսկերէն նշանակում է տաքից թափող։ Ծան. հեղ.

1) Արք մի հին աշտարակ է, որ մնացել է գուցէ արաբացիների տիրապետութեան ժամանակից։ Ծան. հեղ.

2) Վասպուրականի մէջ, Վանայ լճակի մօտ է սուրբ Տիրամոր վանքը։ Փոքրիկ գիւղը, որ պատկանում է վանքին, բնակեցրած է մեծ մասամբ այդպիսի բորոտներով։ Նոքա բոլորն էլ հայ են և կոչում են իւրեանց տիրամօր խեղճեր, իսկ ախտը կոչվում է տիրամօր ցաւ։ Վարդապետների շահասիրութիւնը,—օգուտ քաղելով ժողովրդի տգիտութիւնից, թէ այդպիսի ախտը սուրբ Տիրամայրն է գցում մարդկանց վերայ, որոնք բարկացնում էին նորան,—լցրել է այդ գիւղը բորոտներով, որք ժամանակ առ ժամանակ տանում են նորանց ժողովրդի մէջ ման ածում, Տիրամօր պատիժները նորանց ցոյց տալիս և փող հաւաքում։ Ծան. հեղ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 24 Мая 1873 г. Մէլիքովի և ընկ. տպարան Խմբագիր—Հրատարակող Գրիգոր Արծրունի